

## Մամլոյ Հաղորդագրութիւն, 9/7/2014

09/07/2014-ին, Լահէյի միջազգային դատարանը հրապարակեց իր արդար համարձակ բանաձեւը բաժանման պատի կառուցման շուրջ, գրաւուած Պաղեստինի Արեւմտեան Ափի հողերուն մէջ Սիոնական գոյացութեան կողմէ, համարելով այդ որպէս հակասում միջազգային կանոնին, և պահանջելով կործանել պատը ու փոխհատուցել պատճառուած վնասները անոր կառուցման հետեւանքով:

Այս բանաձեւին հրապարակման տասներորդ ամեակին առթիւ, Ազգային Համակարգող Մարմինը կը հաստատէ իր համերաշխութիւնը Պաղեստինեան ժողովուրդին հետ, կը պահանջէ կործանել ցեղային մեկուսացման պատը ու դադրեցնել թշնամիին շարունակուած վայրագ ոճրագործութիւնները Պաղեստինեան ժողովուրդին հանդէպ Կազայի և Արեւմտեան Ափին մէջ, կը պահանջէ գործունէայ դեր Ազգային միասնութեան կառավարութեան, կը պահանջէ Եգիպտոսն ու Արաբական պետութիւնները վերստին աշխատակցիլ համապաշտպանութեան համաձայնութեամբ, պաշտպանել Պաղեստինեան ժողովուրդը շարունակուած յարձակումներէն, աշխատիլ կործանելու ցեղային մեկուսացման պատը, վերցնել Կազայի պաշարումը, ազատ արձակել գերիները և վերջ տալ գրաւումին:

Ողջոյն դիմացկուն անսասան Պաղեստինի ժողովուրդին և ազատութիւն գերիներուն:

Դամասկոս, 9/7/2014

Գործադիրի գրասենեակ